



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« ___ » _____ 2022թ.

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, 0002, ԿԵՆՏՐՈՆ,
ԱՄԻՐՅԱՆ Փ., 11, 24
Էլ. փոստ՝ anahit@prwb.am
հեռ.՝ 077 76 80 16

Ձեր 07.03.2022թ-ի թիվ հ516989-ի գրությանը.

Հարգելի տիկին Մկրտչյան

ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող բժշկական կենտրոնների կողմից 27.09.2020-24.03.2021թթ. ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով (թիվ 3761-Լ, թիվ 3636-Լ, թիվ 3633-Լ և այլն) Covid-19 ախտորոշումը հաստատված և ախտորոշման ճշտման անհրաժեշտություն ունեցող պացիենտների բժշկական օգնություն և սպասարկում իրականացրել են (վերապրոֆիլավորվել են) «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն: Ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ համաձայն բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի:

Վերոնշյալ կազմակերպություններն իրականացրել են նաև պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց բժշկական օգնություն և սպասարկում՝ ըստ դիմելիության, ֆինանսավորումը ներառված է եղել այդ կազմակերպությունների կողմից մատուցվող ընդհանուր ծառայությունների մեջ:

11/03/2022

X

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆ**

արտոնագիր № 2513,
գործ. հիմնական վայր՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 11, բն. 24
Հեռ. 098505303, 077768016, էլ. հասցե՝ anahit@prwb.am

**THE REPUBLIC OF ARMENIA
MEMBER OF CHAMBER OF ADVOCATES
ANAHIT MKRTCHYAN**

license: № 2513,
Main address: RA, Yerevan, 11 Amiryan st., apt 24
tel. 098505303, 077768016, email: anahit@prwb.am

Լոռու մարզ՝
Մարզպետ՝ Արամ Խաչատրյանին
04.03.2022

Հարգելի պարոն Խաչատրյան,

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, ինդրում ենք տրամադրել Ձեր ենթակայության տակ գտնվող կամ Ձեր կողմից լիազորված այն բժշկական կազմակերպությունների ցանկը, որոնք 2020թ.-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2021թ.-ի մարտի 24-ը ներառյալ բժշկական օգնություն և սպասարկում են տրամադրել միաժամանակ Կովիդով վարակված անձանց և պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց: Խնդրում ենք տրամադրել նաև տեղեկատվություն վերը նշված բժշկական կազմակերպություններին պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների վերաբերյալ (1. կորոնավիրուսային հիվանդության հետևանքով տուժած անցած բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար 2. պատերազմի հետևանքով տուժած անձանց բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար):

Հարգանքով՝
Անահիտ Մկրտչյան